

ՄԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության բաժնի երկրորդ կուրսի ուսանող

ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Հողվածը նվիրված է նախնական պայմանագրերին, որպես պայմանագրի կնքման եղանակ: Հողվածի շրջանակներում հեղինակի կողմից համակողմանի վերլուծության են ենթարկվել նախնական պայմանագրի ինստիտուտի պատմական զարգացման առանցքները, ինչպես նաև համեմատական մեթոդի օգտագործման միջոցով ներկայացվել են նախնական պայմանագրերի իրավական կարգավորման շրջանակներում առկա թերացումներն ու բացերը, ինչպես նաև դրանց հաղթահարման ուղիները:

Հիմնարար քառեր - նախնական պայմանագիր, կորուստներ, պայմանագրային հարաբերություններ, կոնտրագենտ:

Համաձայնության այն տեսակները, որոնցում արտացոլում են ստանում կողմերի մտադրությունները՝ հետագայում հաստատելու պայմանագրային հարաբերություններ, պայմանագրային հարաբերություններում հանդես են գալիս նախնական պայմանագրի իրավական կառուցակարգի ձևով: Մինչև նախնական պայմանագրի օրենսդրական ամրագրումը, լայն տարածում ուներ մտադրությունների մասին արձանագրությունը. վերջինս իրավական հետևանք չէր առաջացնում, քանի որ հանդիսանում էր միայն կողմերի մտադրությունների ամրագրման միջոց: Նախնական պայմանագիրը առաջացել և իրավական հատկանիշներ է ձեռք բերել դեռևս հռոմեական իրավունքում (pactum de contrahendo): Հարկ է նշել, որ հռոմեական իրավունքում նախնական պայմանագրին վերաբերող նյութերը ենթարկված էին մանրամասն կարգավորման¹: Համաձայն հռոմեական իրավունքի՝ մի կողմը կարող էր ստիպել պայմանագրի կնքումից հրաժարվող կողմին կնքել պայմանագիր կամ հատուցել չկնքման հետևանքով պատճառված վնասները:

Անգլո-սաքսոնական իրավական համակարգը կրող երկրները ինստիտուտը ենթարկեցին մոդերնիզացման²: Վերջինս դրսևորվեց նրանում, որ կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ երկկողմ պարտավորեցնողից վերածեցին միակողմ պարտավորեցնողի:

Ուշագրավ է նաև Վ. Անտոնի մոտեցումը այս հարցին. սաքսոնական իրավական համակարգի երկրները չէին կարող ընդունել նախնական պայմանագրի դասական կոնստրուկցիան, քանի որ այն ոչ մի կերպ չէր տեղավորվում նրանց մոտ գործող «պայմանագրի պայմանների հասկացության սկզբունքի մեջ»³:

Նախնական պայմանագրի դրույթները իրենց ամ-

րագրումն էին գտել նաև 1922թ. ընդունված ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքում, սակայն խիստ սահմանափակմամբ՝ ընդամենը երկու հողվածի տեսքով: Արդեն 1964թ. քաղաքացիական օրենսգրքը ընդհանրապես ոչ մի նորմ չէր պարունակում նախնական պայմանագրի մասին: Վերջինս կարելի է բացատրել նրանով, որ նախնական պայմանագիրը չէր կարող համարվել իրավահարաբերության մասնակիցների նպատակներին հասնելու լավագույն իրավական միջոցը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հողվածում թվարկված են նախնական պայմանագրին վերաբերող հիմնական պահանջները: Դատելով նախնական պայմանագրի մասին արված վերլուծությունից՝ կարելի է ասել, որ այն համարվում է միակողմ պարտավորեցնող: Այս մասին է փաստում Գողեմենը: Վերջինս, խոսելով առուծախի պայմանագրի մասին, նշել է. «Մույն պայմանագրում պարտավորություն է ստանում կա՛մ միայն գնորդը (պարտավորվում է գնել), կա՛մ միայն վաճառողը (պարտավորվում է վաճառել)»⁴: Ուշագրավ է նաև Ի. Բ. Նովինցկու մոտեցումը այն հարցին, որ չի բացառվում միակողմ պարտավորեցնող հարաբերությունների սահմանումը՝ հետագայում երկկողմ պարտավորեցնողի վերածելու մտադրությամբ⁵: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հողվածի՝ եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջով: Նույն հողվածի 2-րդ կետն ամրագրում է, որ պայմանագրի կնքումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի դրանով պատճառված վնասները:

Այսինքն՝ կողմերից մեկի՝ հիմնական պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում մյուս կողմը իրա-

վունք ունի ստիպել մյուս կողմին՝ կնքելու պայմանագիր, և ստանալ չկնքմամբ իրեն պատճառված վնասների հատուցումը: Նմանատիպ տույժերը իրենց մեջ ներառում են այն կորուստները, որոնք ի հայտ են եկել հիմնական համաձայնագիր չկնքելու պատճառով⁶:

Այստեղ անհրաժեշտ է հատուկ քննարկման առարկա դարձնել այն դեպքերը, երբ պայմանագրային հարաբերությունների հաստատումը՝ կապված պայմանագրի առարկայի հետ, սերտորեն կապված է հանրային շահերի հետ: Տվյալ պարագայում, ըստ մեզ, պայմանագրային հարաբերությունների հաստատումը ստանում է առանձնահատուկ նշանակություն: Բանն այն է, որ այս դեպքում պայմանագրի կնքումից հրաժարումը կարող է էական վնաս հասցնել հանրորեն կարևոր համարվող և հատուկ պաշտպանության տակ գտնվող շահերին: Գտնում ենք, որ նման պարագայում կոնտրագենտի՝ պայմանագիր կնքելուց հրաժարվելու հնարավորությունն անհրաժեշտ է քացառել՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածը հավելելով նոր պարբերությամբ, որը կողմի համար ուղղակի պարտադիր կդարձնի պայմանագրային հարաբերությունների հաստատումը, եթե պայմանագրի առարկան անմիջականորեն կապված է հանրային նպատակներով օգտագործման հետ, կամ պայմանագրի կնքումը հետապնդում է ոչ թե մասնավոր, այլ հանրային կարևորություն ունեցող նպատակներ: Ըստ այդմ, առաջակում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածը հավելել նոր պարբերությամբ. **«Այն դեպքում, երբ պայմանագրային հարաբերությունների հաստատումը՝ կապված առարկայի հետ, անմիջականորեն կապված է հանրային շահերի հետ, կողմերի համար նախնական պայմանագիրը կնքելուց հետո հիմնական պայմանագրի կնքումը համարվում է պարտադիր»:**

Կարծում ենք, որ տվյալ պարագայում, չխախտելով պայմանագրի ազատության՝ կոնտրագենտին տրված իրավասությունների սահմանը և նախնական պայմանագրի իրավական կառուցակարգը, միևնույն ժամանակ կքացառենք մասնավոր շահերի գերապատվությունը հանրային շահերի նկատմամբ նաև պայմանագրային հարաբերությունների հաստատման գործընթացում:

Մեծ նշանակություն ունի այն հարցը, թե ինչ բովանդակություն պիտի ունենա նախնական պայմանագիրը: Արտահայտած մտեցումներից մեկի համաձայն՝ նախնական պայմանագիրը պետք է ներառի ընդհանուր պայմաններ՝ մնացած հարցերի շուրջ հստակեցումը թողնելով հիմնական պայմանագրին⁷:

Վերը նշված դրույթն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 3-րդ կետում, համաձայն որի՝ նախնական պայմանագիրը պետք է պարունակի պայմաններ, որոնք թույլ են տալիս սահմանել

հիմնական պայմանագրի առարկան, ինչպես նաև մյուս էական պայմանները: Նախնական պայմանագիրը համարվում է հիմք հիմնական պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար⁸: Հատկանշական է «տուգանքների» մեխանիզմի կիրառումը: Հարկ է հիշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հարցի կարգավորման նման մեխանիզմ չի նախատեսում, այլ անդրադառնում է միայն պայմանագիր կնքելուց անհիմն հրաժարվելու դեպքում պատճառված վնասների փոխհատուցում: Վերոհիշյալ դրույթը քաղաքացիական օրենսգրքում ամրագրված է 445-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն որի՝ այն դեպքում, երբ նախնական պայմանագիր կնքած կողմը խուսափում է հիմնական պայմանագիր կնքելուց, կիրառվում են 461-րդ հոդվածում սահմանված կանոնները:

Սակայն գործնականում հանդիպում են դեպքեր, երբ նախնական պայմանագրով սահմանվում է պարտականություն այս կամ այն պարտականությունը չկատարելու դեպքում: Բանն այն է, որ տուգանքը քաղաքացիական օրենսգրքի տեսանկյունից ներկայացվում է որպես տուժանքի տարատեսակ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդված): Տուժանքն օրենսդրորեն ամրագրվել է նաև պարտավորությունների խախտման համար պատասխանատվության միջոց (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 410-րդ հոդված):

Այստեղից ակնհայտ է դառնում, որ տուժանքի մասով նախատեսվել է երկակի կիրառման մեխանիզմ: Այսինքն՝ այն մի կողմից նախատեսվում է որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, մյուս կողմից՝ պարտավորությունների խախտման համար պատասխանատվության միջոց:

Ուշագրավ է այստեղ պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանի մտեցումը տուժանքի երկակի կիրառման վերաբերյալ: Համաձայն նրա՝ տուժանքի երկակի կիրառումն արդարացված չէ: Պրոֆեսորի վերլուծությամբ «տուժանք» պետք է անվանել իրավախախտման համար գանձվող, օրենքով կամ պայմանագրով նախատեսված այն դրամական գումարը, որի չափը որոշվում է խախտված պարտավորության արժեքից՝ տոկոսային հարաբերությամբ, իսկ «տուգանք»՝ իրավախախտման համար գանձվող այն գումարը, որի չափը որոշվում է կայուն դրամական գումարով կամ պատիկներով⁹: ՌԴ դատական պրակտիկայում տուժանքի կիրառումը ևս ներկայացված է երկակի մեխանիզմով¹⁰, որտեղ պարտավորությունների կատարման կետանցի համար կիրառված տոկոսային գանձման մեխանիզմը ներկայացվում է որպես տուժանք և ընկալվում որպես պարտավորությունների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոց: Այս պարագայում գտնում ենք, որ «տուգանք» և «տուժանք» տերմինները պետք է նույնականացվեն և ընդունվեն որպես պար-

